British Embassy Yerevan

Շվեդիա Sverige

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

UNDP

UKaid from the British people

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն
International Center for Human Development

WFD
WESTMINSTER FOUNDATION FOR DEMOCRACY

OxYGen EMPOWERING WOMEN AND YOUTH

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

POLICY BRIEF

«Ժամանակակից խորհրդարան՝ ժամանակակից Հայաստանի համար» ծրագիր

“Modern Parliament for a Modern Armenia” project

ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի «Նոր Հայաստան՝ ժամանակակից խորհրդարան» ծրագիրն համաիրականացվում է ՕքսԵԶեն հիմնադրամի, Մարդկային կարգացման միջազգային կենտրոնի, Ժողովրդավարության Վեսթմինսթր հիմնադրամի հետ՝ ՀՀ Ազգային ժողովի հետ համագործակցությամբ: Ծրագիրն իրականացվում է Միացյալ Թագավորության «Լավ կառավարման հիմնադրամի» և Շվեդիայի կառավարության ֆինանսական օժանդակությամբ

“The UNDP “Modern Parliament for a Modern Armenia” project is co-implemented with the OxYGen Foundation, the International Center for Human Development, and the Westminster Foundation for Democracy, in cooperation with the National Assembly of the Republic of Armenia. The project is funded by the United Kingdom's Good Governance Fund and the Government of Sweden.

www.ichd.org

Հանրակրթությունն արտակարգ դրության պայմաններում և անդին

Համառոտագիր

Մարդկային զարգացման միջազգային կենտրոն

Մոխրոտիկին շորը չէր, որ զարդարում էր...

Կորոնավիրուսային համավարակն անմիջապես «մերկացրեց» մեր հանրակրթությունը, և պարզվեց, որ այն այնքան էլ տգեղ չէր, որքան կարծում էինք: 2020թ. մարտի 16-ին արտակարգ դրություն հայտարարելուց մեկ շաբաթ անց Հայաստանի 1360 հանրակրթական դպրոցների գրեթե 80% դարձավ «վիրտուալ»՝ կրթությունը կազմակերպելով հեռավար, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) ընձեռած հնարավորությունների կիրառմամբ: Կառավարությունն արտակարգ դրության պայմաններում հնարավորինս արագ և սեղմ ժամկետներում կարողացավ համակարգել ոլորտում առկա ՏՀՏ և կրթական ռեսուրսները, լրացուցիչ նոր ռեսուրսներ առաջարկել, բացահայտել կրթության գործընթացում հեռավար մասնակցություն ապահովելու համար անհրաժեշտ տեխնիկական ռեսուրսների բացը:

Հընթացս վեր են հանվում առկա առանցքային խնդիրները, ինչպիսիք են ուսուցիչների և աշակերտների ավելի շատ ծանրաբեռնվածությունը՝ ի տարբերություն դեմառդեմ կրթական գործընթացի, հանրակրթական առարկայական ծրագրերի գրեթե հայելանման փոխակերպումը հեռավար կրթական գործընթացում, մեթոդաբանության խնդիրները և մասնավորապես ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատանքի մեթոդաբանությանն առնչվող, աշակերտների մասնակցության, գնահատման և քննությունների կազմակերպման գործընթացների անորոշությունները և խնդիրները: Հընթացս ԿԳՄՄՆ և ԿՏԱԿ-ը տալիս են նաև իրավիճակային լուծումներ: Պարզվեց, որ մեր հանրակրթական Մոխրոտիկն իր բոլոր խնդիրներով հանդերձ, և առանց բարի փերու նվերների, հայտնվեց օնլայն պարահանդեսում և հիմնական վախերն ու անորոշությունները հաղթահարելով՝ կարողացավ շարունակել իր պարը՝ հիմնականում ուսուցիչների շնորհիվ:

Ինչպե՞ս պատրաստվել հաջորդ պարահանդեսներին. ո՞րն է խնդիրը

Ներկա համավարակի պայմաններում հանրակրթությունը կազմակերպելու հրատապ կարիքն ու պահանջները հանրակրթության բոլոր դերակատարների՝ թե՛ շահառուների, թե՛ շահակիցների մտահոգությունների վեկտորը փոխեցին դեպի «հեռավար կրթության» հիմնահարցերի քննարկում, թեև պետք է դիտարկել, որ գրեթե բոլորը համակարծիք են մի հարցում. այն ինչ առաջարկվում է այսօր, դժվար է կոչել «հեռավար կրթություն»: Հետաքրքրական է, որ ըստ էության, արտակարգ դրության պայմաններում կազմակերպվող հանրակրթական գործընթացը իսկապես «վարվում է հեռվից»՝ ՏՀՏ գործիքակազմի կիրառմամբ, այսինքն «հեռավար» է, մինչդեռ օնլայն կրթության դասական ճարտարապետության տեսանկյունից՝ այն դժվար է սահմանել որպես «օնլայն» կրթություն:

Սակայն անկախ սահմանումներից, դրանց ընկալումներից և ներկա գործընթացի դասակարգման փորձերից, չափազանց կարևոր է, որ իշխանությունները, և հատկապես գործադիր իշխանությունը, կարողանա դիմադրել թերևս միանգամայն մարդկային հատկանիշներով պայմանավորված գայթակղությանը՝ կարևորագույն հարցին պատասխանելու փոխարեն տրվել այդ նույն հարցն ավելի հեշտով փոխարինելու գայթակղությանը, քանի որ հեշտ հարցերի պատասխանները ևս ավելի հեշտ են:

Մասնավորապես, կառավարությունը պետք է հետևողականորեն շեշտի խնդիրը՝ *ինչպե՞ս կազմակերպել հանրակրթությունը արտակարգ դրության և հանրակրության մասնակից խմբերի առանձնահատկություններից ելնելով*, և չտրվի հատկապես փորձագիտական համայնքի կողմից ներկայում գերակա դարձվող մեկ այլ խնդրի շուրջ լուծումներ փնտրելու գայթակղությանը, այն է՝ օնլա՞յն, թե՞ դեմառդեմ կրթություն: Դեմառդեմ, հեռավար, թե օնլայն, սրանք ընդամենը կրթության կազմակերպման modus operandi են, բոլորն էլ իրենց առավելություններով և թերություններով: Փոխարինելով «Ինչպե՞ս կազմակերպել հանրակրթությունը արտակարգ դրության և հանրակրության մասնակից խմբերի առանձնահատկություններից ելնելով» հարցը *«Ինչպե՞ս պետք է կազմակերպվի հանրակրությունը՝ օնլա՞յն, թե՞ դեմառդեմ»* հարցով, կառավարությունը, փորձագիտական համայնքը և հանրակրթության դերակատարներն ուղղակի կտեղավորվեն այս կամ այն դիրքորոշման հետևում՝ վատնելով վարչական, փորձագիտական, մասնագիտական, գործնական և ֆինանսական ռեսուրսները պատասխանելու հարակից և ոչ թե հիմնական հարցին: Այո, ՀՀ-ում օնլայն կրթությունը զարգացնելու կարիք անշուշտ կա, սակայն պետք է նախևառաջ հստակ սահմանել դրա ռազմավարական նշանակությունը՝ առնվազն երկարաժամկետ հեռանկարում, և որպես ռեսուրս՝ արտակարգ իրավիճակներում:

Երևան 0001
Սայաթ Նովա 19
Հեռ.՝ +374 10 582638
Ֆաքս՝ +374 10 527082

mail@ichd.org
www.ichd.org

Հանրակրթության ներկա և ապագա խնդիրներն արտակարգ դրության պայմաններում և հնարավոր արձագանքներ

Հետագա ռազմավարական քննարկումներում անհրաժեշտ է անդրադառնալ արտակարգ իրավիճակների առանձնահատկություններին. ինչպիսի՞ ռեսուրսներ կարող են հասանելի լինել տարբեր արտակարգ իրավիճակներում՝ համավարակ, լայնամասշտաբ ռազմական գործողություններ, բնական աղետներ: Օրինակ՝ համավարակով պայմանավորված արտակարգ դրության ժամանակ հանրակրթությունը հեռավար դարձնելու համար անհրաժեշտ գործոնները՝ էլեկտրական հոսանք, տեխնիկական սարքավորումներ, կապի որակ, հասանելիություն և մատչելիություն, հիմնականում առկա են: Առկա՞ են լինելու այդ ռեսուրսները այլ արտակարգ իրավիճակներում...

Նախորդ երկու ամիսների ընթացքում հնարավորություն ընձեռնվեց իրական պայմաններում վեր հանել համավարակով պայմանավորված արտակարգ իրավիճակում հանրակրթությունը կազմակերպելու խնդիրները, մասնավորապես՝ (1) կապի հասանելիություն և մատչելիություն. (2) տեխնիկական հագեցվածություն. (3) ԿԳՄՄՆ, մարզպետարանների, տնօրենների, ուսուցիչների միջև հաղորդակցության ուղղահայացությամբ և համապատասխանաբար դրա վրա հիմնված ակնկալիքներով պայմանավորված դասավանդման պրակտիկա. (4) առարկայական ծրագրերի մեկնաբանության և դասավանդման ազատության հիմնականում չօգտագործված հնարավորություն. (5) ուսուցիչների համակարգչային գրագիտություն. (6) օնլայն դասավանդման մեթոդաբանության խնդիրներ, ներառյալ աշակերտների տարբեր խմբերի՝ տարիքային, հոգեբանական և զարգացման առանձնահատկություններով պայմանավորված. (7) գնահատման խնդիրներ. (8) խնդիրների բարձրաձայնման, համակարգման և դասակարգման, ինչպես նաև առկա ռեսուրսները համապատասխան թիրախային խմբերին ուղղորդելու «մեկ պատուհանի» կարիք:

Արտակարգ դրությունից հետո արձագանքն այս բոլոր խնդիրներին պահանջում է համակարգված մոտեցում՝ համահունչ հիմնական խնդրի շուրջ կառավարության ռազմավարական ընտրությանը: Այս մոտեցումը և այն իրականացնելու համար անհրաժեշտ միջոցառումների շրջանակը պետք է հիմնված լինի վստահելի փաստական հիմքի վրա, առնվազն տարբեր հարթակներում հավաքված գործնական խնդիրների և մտահոգությունների վերլուծության, հանրակրթության ոլորտում ՏՀՏ կիրառման, հեռավար և օնլայն ուսուցման փորձառության ընդգրկուն հետազոտության, ուսուցիչների վերապատրաստման մեխանիզմների մոնիտորինգի և գնահատման տվյալների վրա: Անհրաժեշտ է ԿԳՄՄՆ-ում բազմամասնագիտական օպերատիվ խումբ (task force) կազմավորել, որը կզբաղվի հենց այս փաստական հիմքի ձևավորման, շահառուների հետ հետևողական հետադարձ կապ պահպանելու և դրա հիման վրա քաղաքականության մշակման, քննարկման և համապատասխան միջոցառումների շրջանակի ձևավորման խնդիրներով, որոնք կներառեն նաև մասնագիտական անդրադարձ այնպիսի խնդիրներին, ինչպիսիք են՝

- հեռավար և օնլայն կրթության սահմանումները և առանձնահատկությունները.
- հանրակրթական գործընթացի կազմակերպման տարբերակված մոտեցման հնարավորություններ. օրինակ՝ համայնքի բնակչության թվով և դպրոցում աշակերտների քանակով, ինչպես նաև համաճարակի պայմաններում անհրաժեշտ անվտանգության միջոցառումների առկայությամբ պայմանավորված դեմառդեմ հանրակրթական գործընթացի կազմակերպման հնարավորություն.
- օնլայն ուսուցման ճարտարապետությունը (instructional design), անհրաժեշտ ռեսուրսները, ներառյալ սոցիալական (օրինակ՝ օնլայն կրթության ձևավորման հիմքում ընկած հիմնականում ինդիվիդուալիստական աշխարհայացքով պայմանավորված արժեքների և վարքագծի յուրահատուկ դրսևումները հայաստանյան հիմնականում կոլեկտիվիստական մշակույթում), և մեթոդաբանությունը.
- օնլայն դասավանդման որակի ապահովման մեխանիզմներ և գործիքակազմ.
- օնլայն դասավանդման գործընթացում աշակերտի հետ կապի առանձնահատկությունները.
- գիտելիքի գնահատման առանձնահատկությունները և գործիքները.
- սովորողների տարբեր խմբերի առանձնահատկությունները օնլայն կրթությունում:

Թերևս այս դեպքում մեր հանրակրթական Մոխրոտիկը հաջորդ պարահանդեսներին կկարողանա ներկայանալ իր ողջ գեղեցկությամբ:

Համառոտագիրը մշակվել է 2020թ. մայիսի 2-ին կայացած՝ «ՀՀ հանրակրթական համակարգի արձագանքը նոր կորոնավիրուսային համավարակով պայմանավորված մարտահրավերներին. լուծումներ և քաղված դասեր» խորագրով առանց հողումների իրավունքի առցանց քննարկման մասնակիցների կողմից արտահայտված կարծիքների հիման վրա: Կլոր սեղանին մասնակցում էին անկախ վերլուծաբաններ, պետական պաշտոնյաներ, միջազգային կառույցների ներկայացուցիչներ:

Համառոտագրում արտահայտված են ՄԶՄԿ-ի կարծիքները, որոնք պարտադիր չէ, որ համընկնեն ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի տեսակետներին: